ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 670-Ա
14 օգոստոսի 2024 թվական

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի հուլիսի 8-ին թիվ **Ե/ 1622-24 գրությամբ** Պետական վերահսկողական ծառայության կողմից ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար 2024 թվականի մայիսի 27-ին տեղեկագրում *(օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք, այսուհետ՝ Տեղեկագիր)* հրապարակված **աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՇՄԱՆՀ-ԳՀԾՁԲ-24/5»** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերլուծություն արդյունքում պարզվել էր, որ «Տեխ. հսկողություն թիվ 1» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 04438751, այսուհետ՝ Ընկերություն) 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն հանդիսացող Գևորգ Վաղարշակի Գևորգյանը **100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն** է հանդիսանում նաև տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում գտնվող «Տարոն-ԳԳ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 05028219): Չնայած այն հանգամանքին, որ պայմանագիր կնքելու արդյունքում գնահատող հանձնաժողովը համարվել է լուծարված, ՀՀ ֆինանսների նախարարության 2024 թվականի օգոստոսի 06-ի թիվ **03/26-1/16671-2024 գրությամբ նշվել է, որ պետք է ձեռնարկվեն միջոցներ՝** «Տեխ.հսկողության թիվ 1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 2-րդ մասի, ինչպես ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 121-րդ կետի դրույթներով՝ ***որոշում եմ՝***

1. Քանի որ ի հայտ են եկել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը՝ <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման>>, ուստի անհրաժեշտ է «Տեխ. հսկողություն թիվ 1» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04438751, հասցեն՝ ՀՀ,

Երևան, Դավթաշեն 1-թղմ. 15շ, 25 բն) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Օրենքով սահմանված կարգով սույն որոշումը ներկայացնել լիազորված մարմին և մասնակցին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«14» օգոստոսի 2024 թվական
Քաղաք Մարալիկ